



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mta.gov.am

18. հուլիսի 2016թ. № 03/10/2/3123 - 16


Ինֆորմացիայի Ազատության Կենտրոն
ՀԿ նախագահ Լ.Դոյրոյանին

Հարգելի տիկին Դոյրոյան

Ի պատասխան Ձեր գրության, տեղեկացվում է, որ, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման հաշվեկշռում ունենք 6 թեթև մարդատար ծառայողական ավտոմեքենաներ՝ ՀՀ կառավարության 17.02.2005թ. N 194-Ն որոշմամբ հաստատված 8 սահմանաքանակի փոխարեն: 2016թ-ի մայիսի 1-ից մինչև օրս որևէ ավտոմեքենա չի կրճատվել, քանի որ շահագործման ենթակա են:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ

Կատարող՝ Ա.Խաչատրյան
Հեռ. /0285/ 2-38-96
էլ-հասցե՝ Syunik.qaghshin@mail.ru



ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. info@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

14.07.2016թ.
291-ի 1

ՀՀ Սյունիքի մարզպետ
պարոն Սուրիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2016 թ.-ի մայիսի 1-ից մինչև օրս ՀՀ Սյունիքի մարզպետարանում որքա՞ն ծառայողական մեքենա է կրճատվել:
2. Կրճատված մեքենաներից քանի՞սն են եղել չշահագործվող:
3. Խնդրում ենք նշել կրճատված մեքենաների մակնիշները:
4. 2016 թ.-ի մայիսի 1-ից մինչև օրս որքա՞ն վարորդ է կրճատվել:

Տեղեկատվության ազատության մասին՝ ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան

